ստահակք · բառնալ նաեւ հրովարտակաւ Արքայի զնորա-
սահման տուրս , թէպէտեւ վասն այսր Լատինք բազում
աշխատութեամբ առեալ էին հրովարտակ , այլ 'ի մատու-
ցանել զայն Կուսակալին ոչինչ օգտեցան ։ Եւ ապա յաւե-
լին ասել · եթէ անհնարին լիցի կատարել զխնդիր իւր-
եանց , առցեն հրաման և ոստիկան 'ի Դրանէ հանել զվա-
նականս յԵրուսաղէմ , զի երթեալ բնակեսցին 'ի Կիպրոս
և յայլ տեղիս · զի Արաբացիք ոչ հանգիստ տան և ոչ փա-
խըստեան տեղի · զի հրեշտակական հոգեղէն բնութիւնն
անգամ ոչ կարէ տոկալ այսպիսի նեղութեանց , թող թէ
մարդ երկրածին (1807 · Նոյեմբեր 17) ։ Յետ այսր ամ-
նայնի դատաւորն , Միւֆթին , քաղաքապետն և այլք , իբր
խնայելով առին 'ի Հայոց 15,000 դահեկան · նոյնչափ եւս
'ի Յունաց և 'ի Լատինաց և պահանջէին զդինս ջուխտի ,
որոյ վասն հանին խայտառակութիւն մեծ ։ Հրէայք խպտա-
անշնչացեալ՝ փոխանորդ նոցա փախեաւ 'ի քաղաքէն ։ Տե-
սուչ եւ փոխանորդն Լատինաց անհանդիստ փակեցան 'ի
վանս իւրեանց , թարգմանն Յունաց իբր հիւանդ խոյս ետ
'ի Խաչավանքն , իսկ վասն Հայոց չիք ինչ ասել , զի 'ի յա-
ճախիլ պարտատերաց տային յիշել զաւուրս Տեղակալաց ։

Դամասկոս առ հասարակ բնակչօք հեծէ 'ի նեղութիւնս
'ի բռնութենէ իշխողին , զի բռնադատէր զքրիստոնեայ
գործակալս թլփատիլ՝ որոց փախուցեալ ընտանեօք զեր-
ծան , զնոյն պահանջէր և 'ի հպատակաց ստիպելով , որպէս
գրէ զայսոսիկ առաջնորդ տեղւոյն Պետրոս վարդապետ ։

Զկնի հասանելոյ գրեանց 'ի Կոստանդինուպոլիս , գրեաց
Յակոբ եպիսկոպոս փոխանորդն թէ՝ անհնարին է որոշել
զԵրուսաղէմ 'ի Դամասկոսէ և կարգել առանձին Բդեշխ ։
Եւ 'ի սոյն աւուրս ընթերցաւ հրաման կուսակալին 'ի դա-
տարանն Երուսաղէմի և 'ի ձեռն քարոզի ծանուցաւ բնակ-
չաց , յորում ասէր , զի առհասարակ Մահմետականք մեծ
և փոքր պարտին թողուլ մօրուս , սակայն երիտասարդք
ոչ անսացին հրամանին , որոյ վասն եղեւ աղմուկ 'ի քա-
ղաքին , նեղութիւն վանօրէից վասն գլխահարկի (1808 ·
Յունվար) ։ Յիշատակի անուն Դանիէլ Կաթուղիկոսի յե-
կեղեցիս (Մարտ 7) ։

Նեղութիւն քրիստոնէից Դամասկոսի վասն զգեստուց ։